

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ >>

Կատարող՝ Էմմա Մանասյան

Առարկա՝ Աշխարհագրություն

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի N7
միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ 1. Աշխարհագրության ուսուցման միջոցների դերը աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում

1.1. Ուսուցման միջոցների դերը աշխարհագրության ուսումնասիրման ընթացքում

1.2. Աշխարհագրության դասագրքի դերը աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում: Էլեկտրոնային դասագիրք

1.3. Աժխարհագրական քարտեզի դերը աժխարհագրական պատկերացումների և կարողությունների ձևավորման գործում

1.4. Աժխարհագրության ուսուցչի գործունեությունը աժխարհագրության կաբինետի առկայության պայմաններում

Գլուխ 2. Փորձարարական մաս

2.1. Աժխարհագրության ժամանակակից դասի մոդել՝ Դաս **5.2.** «Ձբի շրջապտույտը և նրա նշանակությունը բնության մեջ»

2.2. Արդյունքների վերլուծություն

Ամփոփում

Եզրակացություններ

Օգտագործված գրականության ցանկ

Հավելված

Ներածություն

Արդի ժամանակաշրջանում դարձողական աժխարհագրության առջև խնդիր է դրված ապահովել սովորողների աժխարհագրական կրթությունը, որը աժխարհագրական գիտելիքների ձևավորումից բացի ենթադրում է նաև այդ գիտելիքների միջոցով ստեղծագործական և աժխարհագրական մտածողության զարգացում, աժխարհագրական գիտելիքների կիրառման կարողություն, հուզարժեքային վերաբերմունքի ձևավորում: Նշված բաղադրիչների շարքում անուշտ կարևորվում են աժխարհագրական գիտելիքները և դրանց հիմքը

կազմող աշխարհագրական պատկերացումներն ու հասկացությունները, որոնց ձևավորման մակարդակից են կախված մյուս բաղադրիչների ձևավորման որակը: Այսօր դպրոցները որոշ չափով համալրվել են համակարգիչներով և ժամանակակից համակարգչային ծրագրերով, սակայն նվազել է «կենդանի» ուսուցման միջոցների դերը և տեսակարար կշիռը դպրոցի կահավորման մեջ, ինչը մեր խորին համոզմամբ դրական չի անդրադառնում աշխարհագրական պատկերացումների ու հասկացությունների ձևավորման որակի վրա: Այսօր անհրաժեշտ է կրկին և նորովի անդրադառնալ ուսուցման միջոցների ստեղծման և կիրառման սկզբունքներին, որպես աշխարհագրական կրթության ապահովման նախապայման:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել և հիմնավորել աշխարհագրության ուսուցման միջոցների դերը դպրոցում, որպես աշխարհագրական պատկերացումներ և հասկացություններ ձևավորող կարևոր նախապայման:

Հետազոտության օբյեկտը՝ աշխարհագրության ուսուցման միջոցների, աշխարհագրական հասկացությունների ու պատկերացումների ամբողջությունն է:

Հետազոտության առարկան՝ աշխարհագրության ուսուցման միջոցների ազդեցությունը աշխարհագրական հասկացությունների և պատկերացումների ձևավորման գործում:

Հետազոտության վարկածն է՝ աշխարհագրական հասկացություններն ու պատկերացումները սովորողների մոտ առավել լիարժեք կձևավորվեն, եթե աշխարհագրության ուսուցման գործընթացում նորովի կիրառվեն և՛ ավանդական, և՛ ժամանակակից ուսուցման միջոցները, միտված լինելով ձևավորելու աշակերտի կարողություններն ու հմտությունները, տրամաբանական, ստեղծագործական և աշխարհագրական մտածողությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել աշխարհագրության ուսուցման միջոցների, աշխարհագրական պատկերացումների ու հասկացությունների էությունը:
2. Բացահայտել աշխարհագրության ուսուցման միջոցների դերը աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում:
3. Մշակել աշխարհագրության ժամանակակից պահանջներին համապատասխան դասի մոդել, որում կարտացոլվի ուսուցման միջոցների դերը աշխարհագրական հասկացությունների և պատկերացումների ձևավորման գործում:

Հետազոտության մեթոդներն են՝

1. Տեսական՝ վերլուծության և համադրման մեթոդ, ֆանակական մեթոդ, մաթեմատի-

կական մեթոդ:

2. Կնախարարիկ հետազոտության մեթոդներ՝ անկետավորում, բնական գիտավորը, փորձարարական ստուգման մեթոդ , տարբերությունների մեթոդ և հետազոտու –

թյան ավարտին կիրառվել է էֆուպերտային գնահատման մեթոդը :

Առաջնորդվել ենք աշխարհագրության ուսուցման արժևորվածության սկզբունքով:

Հետազոտության օրջանակներում իրականացվել է գիտավորը Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի համար **7**, Սոլակի և Քաղսի միջնակարգ դպրոցներում:

Գլուխ 1. Աշխարհագրության ուսուցման միջոցների դերը աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում

1.1. Ուսուցման միջոցների դերը աշխարհագրության

ուսումնասիրման ընթացքում

Ուսուցման միջոցների դերը առաջին հերթին որոշվում է որակի բարձրացման , ուսումնադաստիարակչական ընթացքի , տարբեր խնդիրների լուծման մեջ : Հայտնի է , որ ինֆորմացիայի **20 -30%** , որը առկա էր ստանում են դասի ժամանակ , փոխանցվում են ուսուցման միջոցների միջոցով : Ուսուցման միջոցների կիրառումը թույլ է տալիս մի կողմից բարձրացնել ուսուցչի աշխատանքի որակը , մյուս կողմից հետազոտում է առկա էր գործունեությունը : Այս ժամանակաշրջանում մեծ ու որակյալ առաջընթաց նկատվեց ուսուցման միջոցների վերաբերյալ : Եթե առաջ ուսումնագրական պարագաները կիրառվում էին որպես նյութ , որը լրացնում էր ուսուցչի բանավոր պատմվածքը , հիմա արդեն ուսուցման միջոցները դարձել են ուսումնական ինֆորմացիայի աղբյուր : Ուսուցման միջոցների դերը այնքան է մեծացել ժամանակակից դպրոցում , որ կարելի է ասել նրա մեծ ազդեցության մասին ուսուցման բովանդակության և մեթոդների վրա [12, էջ 150-151] :

Զննման խնդիրը դիտվում է հոգեբանների և մանկավարժների տարբեր ուսումնասիրությունների մեջ :

Որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն հասկացություններ , պետք է օգտագործել տարբեր ցուցադրական պարագաներ և տեսողական միջոցներ : Հիմնական ուսումնատեսողական տեսակներին վերագրում են 1) իրական առարկաներ , երևույթներ բնական վիճակում , 2) ուսումնասիրման մոդելներ , 3) նկարագրող պարագաներ, 4) գծագրական պարագաներ:

Այս ուսումնատեսողական պարագաները տարբերվում են միմյանցից իրենց դիդակտիկ հատկություններով և դիդակտիկ ֆունկցիաներով :

1.2. Աշխարհագրության դասագրքի դերը աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում: Էլեկտրոնային դասագիրք:

Ուսուցման միջոցների համակարգում դասագիրքը կենտրոնական տեղերից մեկն է գրավում , նա համապատասխանում է ուսուցման ծրագրի պահանջներին և արտացոլում նրա պահանջներն ու բովանդակությունը :

Աշխարհագրության ուսուցչի ընդամուր մեթոդական պատրաստակամությունը կախված է ժամանակակից դպրոցական դասագրքերի իմացությունից և այն կարողություններից , որը նա կկիրառի աշակերտների հետ ուսցիոնալ կազմակերպված աշխատանքի մեջ [12, էջ 158] :

Դասագիրքը գիրք է , որի մեջ շարադրված են գիտական գիտելիքների հիմունքները սվյալ առարկայից , համապատասխանեցված ծրագրով , որը նախատեսված է ուսուցման նպատակներն իրականացնելու համար :

Կրթության զարգացման ժամանակակից փուլում գրքի դերը մեծացել է , իսկ նրա ֆունկցիաները՝ բարդացել : Նրա ֆունկցիաները բազմազան են՝ 1.տրանսֆորմացիոն, 2. ինֆորմացիոն , 3. ուսուցանող , 4. համակարգչային , 5. ամրապնդող , 6 ինֆնահսկող , 7.զարգացնող և դաստիարակող :

Այս բոլոր ֆունկցիաներից հիմնականին դասվում են երկուսը՝ ինֆորմացիոն և ուսուցանող : Ժամանակակից գրքերը ավելի շատ դառնում են աշակերտների ինֆնուրայն ուսուցման կազմակերպման միջոց : Գոյություն ունեն տարբեր տեսակետներ <<աշխատանքի բաժնում>> ուսուցչի և աշակերտի միջև : Ոմանք համարում են, որ դասագիրքն անհրաժեշտ է , որ օգնի աշակերտին ամրապնդել գիտելիքները և վերամշակել ուսուցչի տված ինֆորմացիան : Ոմանք էլ համարում են , որ դասագիրքը

հենց պիտի սովորեցնի երեխաներին առանց ուսուցչի օգնության : Ավելի իրական է երրորդ տեսակետը՝ ուսուցիչը և դասագրքերը լրացնում են միմյանց, և երկուսն էլ անհրաժեշտ են աշակերտներին :

Աշխարհագրության դասավանդման մեթոդիկայում կուտակվել է մեծ փորձ դասագրքերի ստեղծման համար : Աշխարհագրության դասագրքերը , որոնք ստեղծվել են սովետական ժամանակներում , ակադեմիկ Վ. Պ. Մակսակովսկին , առանձնացրել է հինգ «ալիք» : Առաջին «ալիքի» գրքերը (1930-1960թ) արտացոլում էին իրենց հեղինակների հատուկ ուշադրությունը գիտության հիմունքների շարադրության վրա : Այդ դասագրքերի հեղինակներն էին հայտնի աշխարհագետներ և աշխարհագրություն դասավանդող մասնագետներ Ա. Ա. Պոլովինկինը , Ա. Ս. Բարկովը , Ս. Վ. Չեֆրանովը , Ն. Ն. Բարանսկին և Ի. Ա. Վիտները : Երկրորդ «ալիքի» դասագրքում (1960 -1980թթ) լուծված էր դպրոցական աշխարհագրության գիտական մակարդակի բարձրացման հարցը : Այդ «ալիքի» հեղինակների շարքում էին գիտնականներ , աշխարհագրության ուսուցիչներ և մեթոդիստներ Ն. Ա. Մակսիմովը , Վ. Ա. Կորինսկայան , Վ. Յա . Ռոմը , Վ. Պ. Մակսակովսկին :

Հաջորդ դասագրքերի «ալիքը» հայտնվեց 1980 -1990թ. միջազգային մրցույթ անցկացնելու արդյունքում : Դասագրքերի մրցույթը հասցրեց նրան , որ գրքերի բովանդակությունները կատարելագործվեցին և ստեղծվեցին նոր օրիգինալ մտքեր մեթոդական ապարատ ստեղծելու համար [12 , էջ 159] :

Չորրորդ «ալիքը» (1990թ) բնութագրվում է նոր գուգահեռ դասագրքեր ստեղծելով , որոնք գրված են պրոֆիլային ծրագրերով : Հեղինակների շրջանն ընդարձակվել էր , և անել էր ուսուցիչների և մեթոդիստների ֆանակը : Ավելացել էր դասագրքերի կողմնորոշումը դպրոցական անհատների դաստիարակության վրա :

Հինգերորդ «ալիքը» (XXIդ. սկիզբ) բնութագրվում է նրանով , որ դասագիրքը գրվում է կոլեկտիվ հեղինակներով և խմբագրվում մեկ գիտական խմբագրով :

Ժամանակակից աշխարհագրության դասագիրքը դիտարկում է բարձր գիտական համակարգ , որն ուղղված է գլխավոր խնդրի լուծմանը՝ սովորեցնել աշակերտին սովորել , պատվաստել ինքնագարգացման կարողությունները , բազմացնել ստեղծագործական ունակությունները , անձի անհատական գծերը :

Ժամանակակից աշխարհագրության գրքերի բովանդակության մեջ իրականացված են աշխարհագրական մշակույթի ձևավորման խնդիրները :

Աշխարհագրության գրքերում առանձնացնում են երկու բլոկ՝ ուսումնական և դիդակտիկ (ուսուցանող) :

Աշխարհագրության դասագրքերի հիմնական տեխստը կազմված է գաղափարների որոշումներից , ընդհանրացնող եզրակացություններից :

Տերմինների մեծամասնությունը, որոնք նշանակում են գիտական հասկացություններ, նշված են հասուկ շրիֆտով : Հիմնական տեխսը բաժանվում է բացատրական, հրահանգավորող, և ինֆորմացիոն – նկարագրող :

Տեխսում մեծ տեղ է հատկացված գիտական գիտելիքների ստացման բացահայտման ձևերին (երկրագնդի կառուցվածք, ատոմսֆերա, ծովահատակ և այլն)[12 ,էջ 160-161] :

Աշխարհագրության դասագրքերում տեխսի համար ավանդական է մնում երևույթների և օբյեկտների բնութագրումն ու նկարագրումը :

Աշխարհագրության դասագրքերում գետեղված նյութը առակերտները պետք է հասկանան և յուրացնեն : Դրա համար էլ տեխսի շարադրումը ուղեկցվում է մեծ քանակությամբ սրամաքանակի կապերով, որտեղ որ շատ ենք հանդիպում հետևյալ բառերը՝ «որովհետև», «այսպիսով», «ուրեմն», «եթե», «հետևաբար»:

Այժմյան դասագրքերում բացի տեխսից մեծ դեր է խաղում տեխսից դուրս բաղադրիչը : Բացի ինֆորմացիոն ֆունկցիայից նա կատարում է ուսուցանող, զարգացնող և վերահսկող ֆունկցիաներ : Այսինքն՝ նպաստում է առակերտների կարողությունների զարգացմանը, անալիզի ենթարկելուն, հակադրմանը, մտածելուն:

Հարցերը և առաջադրանքները դասագրքում հաշվարկված են ոչ միայն տեխսի հետ աշխատելու համար, այլև քարտեզների, դիագրամների, ալյուսակների, սխեմաների, նկարների, ֆոտոնկարների համար :

Նրանք պահանջում են մեծ մտավոր և գործնական գործունեություն առակերտների մոտ, (որտեղ քարտեզով, համեմատել, կազմել կամ բնութագրել, օրինակներ բերել, ապացուցել, բացատրել, կազմել գործողությունների պլան և այլն) [12,էջ 163]:

Այսպիսով, հարցերի և հանձնարարությունների ամբողջ համակարգը կողմնորոշված է ոչ միայն ուսումնական նյութի յուրացմանը, այլև ուղղված է դպրոցականների դաստիարակմանը, նրանց հիշողության զարգացմանը, դատողությանը, խոսքին, հայացքներին, համոզմունքներին : Ավելի ցուցադրական է այդ ամենը (հարց ու հանձնարարությունները) 9-10-րդ դասարանի դասագրքերում [12 ,էջ 164] :

Հարցերը և հանձնարարությունները կարող են տեղավորվել 1.պարագրաֆի սկզբում, 2.տեխսում, 3.պարագրաֆի վերջում, 4. մեծ թեմաների, մեծ բաժինների վերջում :

Ժամանակակից աշխարհագրության դասագրքերում գետեղված են բովանդակությամբ ու ձևով տարբեր նկարագրողություններ : Նրանց մեծամասնությունը կազմում են քարտեզաֆիլ նկարագրողներ : Աշխատելով այդ քարտեզի հետ առակերտները ծանոթանում են աշխարհագրական հետազոտությունների

մեթոդներին , իսկ ուսուցիչը , կազմակերպելով այդ աշխատանքը , իրականացնում է ուսումնական նյութի յուրացման գործնական մոտեցում:

Այն դասագրքերը , որոնք մտել են դպրոց XXI դ. սկզբից , մեթոդիստները անվանում են նոր սերնդի դասագրքեր և համարում , որ նրանցից շատերը բավարարում են այն պահանջներին , որը ձևավորել է Վ. Պ. Մակաևիովսկին : Այսինքն՝ 1. Բավարարում են դպրոցների աշխարհագրական մշակույթի ձևավորումը , 2. նկարում են աշխարհի վառ տպավորվող նկարը , 3. աշակերտներին տալիս են հիմնական գիտական գիտելիքներ , 4. ուղևորում են աշակերտին գիտելիքների ինֆորմալիզացիայի հայրաքայմանը , 5. ապահովում են ուսուցման անհատականությունը , 6. հանգեցնում են գիտական սկզբունքների միասնությանը , 7. համապատասխանում են դասագրքերի ժամանակակից մոդելին:

Այսպիսով , գործող աշխարհագրության դասագրքերը ենթարկելով անալիզի , թույլ է տալիս պնդել , որ նրանք իրենցից ներկայացնում են կոմպլեքսային բնութագրության ուսուցման միջոցներ :

Էլեկտրոնային դասագիրք: Մուլտիմեդիական ուսուցման միջոցների օգտագործումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը , օպտիմալացնում է աշակերտների գործունեությունը : Էլեկտրոնային դասագիրքը նոր սերնդի ուսուցման միջոց է , որն իր մեջ համատեղում է տարբեր ձևերի համակարգչային ծրագրերի մասնիկներ և մի շարք ֆունկցիաներ :

Նա , ինչպես և ավանդական դասագիրքը , իրականացնում է տեղեկատվական ֆունկցիա , ապահովում դպրոցականների ուսումնական առարկայի բովանդակության ընկալումը [12, էջ 197] :

Բացի բազային ուսումնական նյութերից մի քանի դասագիրք խորացված ուսուցման համար պարունակում են նյութեր (գործնական աշխատանքներ , համացանցից օգտվելու հնարավորություն) :

Տեխստային ուսումնական նյութը էլեկտրոնային դասագրքում ուղեկցվում է պատկերազարդ նկարներով , տեսահատվածներով , հաղորդավարի բառերով , երաժշտությամբ :

Մուլտիմեդիական տեխնոլոգիաները թույլ են տալիս ոչ միայն հերթականությամբ շարադրել նյութերը , այլև այցելել նրանց խմբի տարբեր հատվածներ: Դրա շնորհիվ դպրոցականները կարող են տեղադրել իրենց գործողությունների ուսուցման հաջորդականությունը և տեղադրել նյութի ընկալման անհատական տեմպը :

Եվս մեկ մուլտիմեդիական դասագրքի ֆունկցիա՝ վերահսկող : Դասագրքերի «Թեստեր» , «Պրակտիկա» բաժիններում տեղադրված են տարբեր ձևերի , տարբեր բարդության մակարդակների հանձնարարություններ , որպեսզի ստուգվեն աշակերտների գիտելիքները : Հանձնարարություններում ցուցված են գնահատական նշանակելու չափանիշները :

Համացանցի միջոցով դպրոցականները կարող են ստանալ ոչ միայն լրացուցիչ ինֆորմացիա , այլև աշխատեն հեռակառավարման ուսուցման ռեժիմով [12, էջ 198-199] :

1.3. Աշխարհագրական ֆարտեզի դերը աշխարհագրական պատկերացումների և կարողությունների ձևավորման գործում

Կային ժամանակներ , երբ աշխարհագրական ֆարտեզների գծագրումը աշակերտների համար պարտադիր էր :

Դա սկսվել է անցյալ դարի հիսունական թվականներին : Սկզբում ֆարտեզների գծագրումը մեթոդապես արդարացված էր : Այդ ժամանակվա դպրոցները չունեին աշակերտական ֆարտեզներ , որոնք հաշվարկված լինեին դպրոցականի հասակային առանձնահատկությունների վրա : Հեռացված ֆարտեզների պահանջարկը ստիպում էր ուսուցչին գծել ֆարտեզը գրատախտակին , իսկ աշակերտները վերանկարեին իրենց տետրերում : Այսպիսի աշխատանքը օգնում էր աշակերտներին արագ յուրացնել ֆարտեզը: Այսպիսով, նշվեց նոր՝ շատ արդյունավետ մեթոդական ձև աշխարհագրության համար: Այդ ժամանակաբաժանում ֆարտեզ գծելը , աշխարհագրության դասավանդման մեջ , առավելագույն ձևերից էր , ինչպես մեր դպրոցներում , այնպես էլ արտասահմանում : Աշակերտները ոչ միայն գծում էին ֆարտեզը ուսուցչի նկարածից կամ բնօրինակից , այլև այն պետք է գծեին անգիր դասարանի գրատախտակի վրա : Այս ամենը ահավոր ժամանակ և ուժի ֆանակ էր խլում յուրաքանչյուր աշակերտից : Այսպիսով, Եվրոպան գծագրելու համար պետք է հիշեին 35 նշաններ , իսկ Ասիան՝ 40 –ից ավելին [12, էջ 171] :

Արդեն 90 –ական թվականների վերջում առաջարկներ արվեցին անգիր ֆարտեզ գծելու ձևի վերացման մասին :

XX դ. սկիզբում ավելի հստակ դրա մասին արտահայտվեցին տարբեր մեթոդիստներ , որոնցից մեկը՝ Ա. Սոկոլովը, ասում էր, որ աշակերտը ի վիճակի չէ նիշտ արտահայտել գծագրում այն ամենը, ինչ նրանից պահանջվում է : Մի՞թե պետք է աշակերտի միջոցով գծագրվեն ֆարտեզները , եթե գոյություն ունեն ատլասներ , աշակերտական ֆարտեզներ , գծագրական ֆարտեզներ :

Մեզ թվում է ոչ : Մի՞թե պետք է անգիր գծել ֆարտեզը : Ոչ : Եվ ի՞նչ օգուտ կար այդ անվերջ հիշողություններից . միևնույն է ֆարտեզը սգեղ էր ստացվում: Ներկա ժամանակներում տարբեր գծագրական ֆարտեզներ օգնում են մեզ ավելի շատ ընկալել ֆիչ ժամանակ և ֆիչ աշխատանք տանելու դեպքում : Ցանցով գծելու ընդունակություն ունենալը շատ հասարակ գործ է :

Բավական է գծագրել միայն մի ֆարտեզ , և արդյունքներն արդեն հասանելի են : Յուրաֆանչյուր ֆարտեզային ցանցում կա 20 վանդակից ոչ ավել : Այսպիսով, գծելով մեկ ֆարտեզ, աշակերտը կրկնում է նույն աշխատանքը մի վանդակում մի ֆանի տասնյակ անգամ : Սա , մեր կարծիքով , բավարար է, որպեսզի սովորել գծագրել յուրաֆանչյուր ֆարտեզի եզրագծերը [12, էջ 172]:

Աշխատանք տեխնոլոգիայի ֆարտեզների հետ: Այս աշխատանքը կազմակերպելու ժամանակ պետք է որոշել նրանց կապը տեխնոլոգիայի հետ, այսինքն՝ ընդգծել հիմնական տեխնոլոգիայի լրացնող տեղեկությունները:

Օրինակ, օդերևութաբանական ֆարտեզի վրա կարելի է տալ մի ստեղծագործական աշխատանք , որտեղ պետք է կառուցել օդային պայմանների պրոֆիլներ (Մակտ — Պետերբուրգ — Վլադիվոստոկ , Մոսկվա — Յակուտսկ և այլն) : Այն դեպքում, եթե բացակայում է հանձնարարությունը տեխնոլոգիայի նկարներին , ուսուցիչը ինքն է ձևակերպում հարցերն այդ ֆարտեզի անալիզի համար : Ուժեղ կազմով դասարաններում կարելի է առաջարկել աշակերտներին ինֆորմացիոն հարցեր կազմել տեխնոլոգիայի ֆարտեզների համար:

Հատուկ տեղ են զբաղում աշխարհագրության ֆարտեզները ուսուցման միջոցների համակարգում : Նրանց մեծ տեղ էին տալիս Ն. Ն. Բարանսկին , Ա. Ա. Պոլովինկին , Գ. Յու. Գրյունբերգը : Ես աշխարհագրական օբյեկտներ անհասանելի են ուսուցման համար : Փոխարինելով հետազոտման օբյեկտը՝ ֆարտեզը դարձել է միջնորդ դպրոցականի գիտահանրամատչելի պրոցեսների և ռեալ իրականության մեջ :

Կարողությունների ձևավորումը աշխարհագրական ֆարտեզների աշխատանքի ընթացքում: Մեթոդական գրականության մեջ, աշակերտները ֆարտեզներով տարբեր աշխատանքներ կատարելիս սովորում են դրանց կարգադրել և ֆարտեզը ճանաչելու մասին :

Ի՞նչ է նշանակում աշխարհագրական ֆարտեզ , որո՞նք են նրա հիմնական հատկությունները , ի՞նչով է տարբերվում երկրային մակերեսի մյուս նկարներից : Քարտեզը հասկանալու համար անհրաժեշտ է աշխատել մասշտաբով, աստիճանացանցով :

Ստուգել ֆարտեզային իմացությունները կարելի է հետևյալ հարցերով և հանձնարարություններով :

Ի՞նչ է մասշտաբը, մասշտաբի ի՞նչ տեսակներ գոյություն ունեն , նրանցից որո՞նք են նշանակալի ֆարտեզների վրա [12, էջ 173] :

Քա՞նի անգամով է վախճանված ֆարտեզի վրա տարածքը՝ 1: 5000000 :

Որտե՞ք իրական տարածությունը երկու կետերի միջև՝ օգտվելով ֆարտեզից :

Ի՞նչ ուղղությամբ է հոսում Ամազոն գետը :

Բավականին ինֆորմացված և հասարակ է դառնում հետևյալ հանձնարարությունը՝ Մ կետից ցույց տվե՛ք ուղղությունը դեպի հարավ , հյուսիս , արևելք , արևմուտք : Հանախ առակերտները (ցածր դասարանի) , իմանալով, որ հյուսիսը գտնվում է ֆարտեզի վերևում , իսկ հարավը՝ ներքևում, արևելքը՝ ձախ , արևմուտքը՝ աջ, ցույց են տալիս ուղղությունները՝ անտեսելով աստիճանացանցի գծերը :

Քարտեզ կարդալը մի կարողություն է, որտեղ կարելի է իմանալ իրականությունը՝ ռեալ աշխարհը վախկապակցելով պայմանական նշաններով : Յուրաքանչյուր ֆարտեզի էությունը ընդհանրացված է նրա վրա տեղադրված նկարների, նշանների վրա, որոնք կազմում են տարածֆային հարաբերությունների համակարգ : Ամեն նշանի իմացությունը շատ կարևոր է առակերտների համար :

Մեթոդական գրականության մեջ տարբերում են հասարակ և բարդ ֆարտեզ կարդալը :

Համաձայն Գ. Յու. Գրյունբերգի մտքերի՝ իմանալ ֆարտեզ նշանակում է հիշել տեղերը , մոտավոր չափերը և աշխարհագրական օբյեկտների ձևերը :

Ուսումնասիրենք հարցերի և հանձնարարությունների օրինակներ, որոնք ուղղված են աշխարհագրական անվանացանկի ընկալմանն ու ստուգմանը : Տվյալ դեպքում ավանդական միջոցներից են հիմնական ֆարտեզները : Տարրական դասարաններում նման հանձնարարությունները կարող են լինել առակերտի՝ լրացուցիչ բանավոր պատասխանից հետո գրատախտակի մոտ :

Այս դեպքում հարցեր կարող են տալ և՛ առակերտը, և՛ ուսուցիչը : Հիմնական ֆարտեզի միջոցով կարելի է կազմակերպել ֆրոնտալ աշխատանք : Այստեղ ուսուցիչը ամրացնում է շրջանակներ համարներով և ասում՝ ինչ է նշանակում նրանցից յուրաքանչյուրը : Օրինակ՝ հարթավայր. առակերտները այդ ժամանակ գրում են գետերի, լճերի անունները : Եթե շրջանակները գունավորված են լինում , ուրեմն աշխատանքը կարելի է անցկացնել երկու տարբերակով :

Աշխարհագրական անվանացանկը ստուգելու համար օգտագործում են գծագրական ֆարտեզներ : Վերջին ժամանակներում ուսուցիչները սկսել են օգտագործել հանձնարարություններ, որոնք կապված են ֆարտեզների վրա սխալների հայտնաբերմամբ [12, էջ 178] :

Մի շարք դեպքերում աշխարհագրական անվանացանկի ստուգումը հնարավոր է առանց ֆարտեզի : Օրինակ՝ կանգնելով մեջքով դեպի ֆարտեզը՝ թվարկե՛ք

- Խաղաղ օվկիանոսի ծովերը Ռուսաստանի տարածքում (հարավից հյուսիս ուղղությամբ)

- Եվրասիայի հսկա կիսալները:

Բացի դրանից կարելի է հանձնարարել գտնել օբյեկտները նրանց բնութագրությամբ.

- Համաաշխարհային օվկիանոսի ամենալայն նեղուցը (Դրեյկի նեղուց)

● Հարավային Ամերիկայի բարձր կետը (Ակոնկագուա լեռը)

● Ցամաֆի ամենաերկար սարերը (Անդեր)

Ուսուցիչներից ուման անվանացանկի ստուգման համար օգտագործում են խաչքառեր, գլոբուսներ և այլն : Վերջապես այս ամենը կարելի է ստուգել թեստային հանձնարարություններով [12, էջ 179]:

Ուսուցման միջոցների դերը առաջին հերթին որոշվում է որակի բարձրացման , ուսումնադաստիարակչական ընթացքի , տարբեր խնդիրների լուծման մեջ : Հայտնի է , որ ինֆորմացիայի 20 -30% , որը առակերտները ստանում են դասի ժամանակ , փոխանցվում են ուսուցման միջոցների միջոցով : Ուսուցման միջոցների կիրառումը թույլ է տալիս մի կողմից բարձրացնել ուսուցչի աշխատանքի որակը , մյուս կողմից հեշտացնում է առակերտների գործունեությունը : Այս ժամանակաշրջանում մեծ ու որակյալ առաջընթաց նկատվեց ուսուցման միջոցների վերաբերյալ : Եթե առաջ ուսումնագնահատական պարագաները կիրառվում էին որպես նյութ , որը լրացնում էր ուսուցչի բանավոր պատմվածքը , հիմա արդեն ուսուցման միջոցները դարձել են ուսումնական ինֆորմացիայի աղբյուր : Ուսուցման միջոցների դերը այնքան է մեծացել ժամանակակից դպրոցում , որ կարելի է ասել նրա մեծ ազդեցության մասին ուսուցման բովանդակության և մեթոդների վրա [12, էջ 150-151] :

Զննման խնդիրը դիտվում է հոգեբանների և մանկավարժների տարբեր ուսումնասիրությունների մեջ :

Որպեսզի առակերտների մոտ ձևավորվեն հասկացություններ , պետք է օգտագործել տարբեր ցուցադրական պարագաներ և տեսողական միջոցներ : Հիմնական ուսումնատեսողական տեսակներին վերագրում են 1) իրական առարկաներ , երևույթներ բնական վիճակում , 2) ուսումնասիրման մոդելներ , 3) նկարագրող պարագաներ , 4) գծագրական պարագաներ :

Այս ուսումնատեսողական պարագաները տարբերվում են միմյանցից իրենց դիդակտիկ հատկություններով և դիդակտիկ ֆունկցիաներով :

Աշխարհագրության ուսուցչի գործունեությունը աշխարհագրության կաբինետի առկայության պայմաններում

1.4. Աշխարհագրության ուսուցչի գործունեությունը աշխարհագրության կաբինետի առկայության պայմաններում

Ծեփակերտումը աշխարհագրության ուսուցման գործընթացում: Ի՞նչի համար է պետք ծեփը : Այս հարցը սալը տեղին է : Զնայած նրան, որ մենք չենք կարող

ասել ' արդյոք պետք է այն աշխարհագրության դասավանդման ժամանակ, թե

ոչ : Նրանք, ովքեր խոսում են դրա մասին, համարում են , որ հասել են մեծ մանկավարժական նվաճումների:Որոշ հեղինակներ մի քանի անգամ օգտագործել են ծեփը փորձերի կարգով և՛ միջին, և՛ բարձր դպրոցներում (պրակտիկ պարապմունքների ժամանակ) : Արդյունքները ամենուրեք նույն էին ստացվում : Պարապմունքների ժամանակ տրվում էին հանձնարարություններ՝ կալից ծեփել հրաբուխ, առանձին բլուր, առանձին սար : Արդյունքում ստացվում էին նմանատիպ ֆիգուրներ , որոնք ավելի շուտ նմանվում էին շափարի կտորի :

Հետո , երբ ուսանող-աշխարհագետներն ու դասավանդողները նայում էին այդ ցուցահանդեսին, ծիծաղում էին , քանի որ ֆիգուրներից 2-3-ը ինչ-որ չափով նմանվում էին սարի : Չէ՞ որ այն ծեփել էին մարդիկ , ովքեր դասավանդում էին աշխարհագրություն կամ էլ պատրաստվում էին դառնալ ուսուցիչ: Ավելի ծիծաղելի տեսարաններ էին ստացվում սարի լանջերը ծեփելու ընթացքում : Ավելի վատ էր գործընթացը անցնում բնագետների մոտ , երբ նրանց հանձնարարվում էր հիշողությամբ ծեփել մարդու ակնջ կամ գորտ : Ստացվում էին շատ զարհուրելի պատկերներ. ակնջի փոխարեն՝ մոխրաման, գորտի փոխարեն՝ մանկական կոշիկ : Բայց երբ նույն հանձնարարությունը տրվեց կատարել բնորդից , ստացվում էին հիանալի պատկերներ [16] :

Այս փորձը ապեցուցիչ պարզությամբ ասում էր մեզ այն մասին՝ ինչպես մենք չենք կարողանում տեսնել , և թե ինչպես ծեփելը սովորեցնում է մեզ տեսնել : Աշխարհագետների համար ծեփը բնորդից դժվար էր կազմակերպել : Օբյեկտների չափերը թույլ չէին տալիս լուծել այդ խնդիրը այնպես , ինչպես բնագետների մոտ: Բայց երբ մասնակիցներին բաժանվեցին գրքեր նկարներով , հրաբուխների կտրվածքներով , հինավուրց, փլուզված սարերով , երիտասարդ սարերով և այլն , առաջարկվեց, նայելով նկարներին, ծեփել : Արդյունքները ապեցուցիչ էին: Առաջին անգամ ծեփելու ընթացքում մարդիկ հասկացան այն ամենը, ինչի մասին վաղուցվանից խոսում էին, պատմում դասերին, բայց պարզ չէին պատկերացնում :

Խելփի , աչքերի , մատների , մկանների աշխատանքը միաձուլվում էր միասին և տալիս ասոցիացիվ կապերի մի ամուր ֆարկապ : Փորձը ավելի արագ և պարզ կփոխանցի այն , ինչի մասին կապի բառերով :

Ծեփը , ի տարբերություն նկարչության, պահանջում է շատ սարքավորումներ : Նրա համար պետք է կավ , տախտակ , լաթ ձեռքերը սրբելու համար , լվացարան ձեռքերը լվանալու համար : Բացի դրանցից ծեփը պահանջում է գիտակցված կարգապահություն , այլապես կավի գնդերը կթոչեն դասարանով մեկ , կընկնեն հատակին: Չնայած այս դժվարություններին՝ պետք չէ հրաժարվել ծեփելուց : Գոյություն ունեն այնպիսի թեմաներ , որոնք լավ են մշակվում ծեփի միջոցով :

Մեր նպատակների համար պետք է վերցնել ֆանդակային կամ սովորական կալ, որի մեջ չլինեն ավագ, ֆարեր [16]:

Այն վաճառվում է խառնուրդներում: Կավը դրվում է ամանի մեջ, վրան ջուր է լցվում այն հաշվարկով, որ կավը խառնելուց ոչ պինդ, ոչ էլ ջրիկ զանգված ստացվի:

Թրջած կավը մնում է 24ժ, հունցելուց հետո տրորում են և բաժանելով մասերի՝ դնում տախտակի վրա: Լավ հունցած և խառնած կավը ձեռքերին չի կպչում, և նրանից հետո են ձեռքովում ու չորանում պատրաստած իրերը:

Վատ հունցած կավի իրերը չորանալուց հետո փռում են: Լավ տրորված կավը երկար կարող է մնալ փակ տարայի մեջ և չփչանալ: Լավագույն տարաներից կավի պահպանման համար կարող են լինել ապակյա, փայտյա և ցինկապատ երկաթյա տարաներն ու անոթները: Ծեփելու համար նախատեսված տախտակների երկարությունը պետք է լինի 30-40սմ, բարձրությունը՝ 1սմ: Եթե կավը ճիշտ է խառնած, և առակերտները աշխատանքի ժամանակ մաքուր սրբում են ձեռքերը, նրանց ձեռքերն այլևս չեն կեղտոտվում: Ահա և ամբողջ սարքավորումը, որը մեկ տարի ծառայում է:

Աշխատանք կավով: Եթե մեզ պետք է կավից ձեփել գունդ ջերմային ցանցի ուսումնասիրության համար, ուրեմն գունդը պետք է լինի բուռնցփի չափ: Գունդը պետք է ձեփել, ոչ թե գլորել տախտակի վրայով: Ծեփելուց հետո ուսուցիչը ստիպում է առակերտներին սրբել ձեռքերը: Հետո աշխատանք է տարվում գունդը իր առանցփի շուրջը պտտեցնելով՝ բևեռների գտնելը և նսեղը:

Ռելիեֆի ձեփման ժամանակ գունդը հարթեցվում է և դրվում տախտակին թեթևակի ուղվածություններով: Մասների օգնությամբ ձեփվում են ռելիեֆի տարբեր ձևերը, լեռնաշղթաները, բարձրավայրերի գագաթները և այլն [16]:

Աշխատանք ավագով: Աշխարհագրության դասավանդման մեջ մեծ օգուտ է տալիս խոնավ ավագը: Խոնավ ավագը երեխաների խաղերի սիրելի նյութն է: Վերջինս հնարավորություն է տալիս ուսուցչին հեշտ և արագ պատրաստել երկնաճերտի յուրաքանչյուր ձև: Չափերը լայն ուրթամբ 1-1,5սմ է: Այս ձևը կարելի է դիտել հեռուից ամբողջ դասարանով:

Լեռնային շղթա, լեռնային գագաթ, բլուրների շարքեր, բարձրավայրեր, սարեր ֆարանձավներով և այլն՝ այս ամենը պատրաստվում են ուսուցչի ձեռքով պատմելու ժամանակ:

Խոնավ ավագը մի ֆանի հավելումներով՝ եղևնու հյուղերով, մամուռով, ֆարերով և այլն, թույլ է տալիս կառուցել մեծ լանդշաֆտներ (ավագյա անապատներ, սարերի բուսականություն, բնակչության սեղադրում):

Ավագը մեծ նշանակություն ունի աշակերտների ինֆորմացիոն աշխատանքներում : Ուսուցիչը միանգամից կարող է հարցնել 2-3 աշակերտի միաժամանակ : Մեկը պատասխանում է բանավոր , իսկ երկուսը ավագով կառուցում են այն ձևերը , որոնք հանձնարարել է ուսուցիչը [16]

Ավագով աշխատելու համար պետք է սովորական սեղան՝ եզրակողերը փայտերով փակված : Սեղանի երկարությունը պետք է լինի 1-1,5մ, եզրակողերի բարձրությունը՝ 10-15սմ : Երբ ավագ պետք չէ, սեղանը ծածկվում է կափարիչով , որպեսզի ավագի վրա փռի չնստի : Ավելի կատարելագործված սեղաններն ունեն ապակյա կափարիչ , որը ավելի երկար է պահպանում պատրաստված ձևերը :

Այս աշխատանքում մեկ —մեկ պետք է գալիս օգտագործել ապակի՝ սոսնձված երկնագույն թղթով , որպեսզի պատկերեն ծովերը , լճերը :

Աշխարհագրության ուսուցչի գործունեությունը աշխարհագրության կաբինետի առկայության պայմաններում պետք է ապահովի պայմաններ անհատի ձևավորման համար : Այդ պայմանները գտնվում են աշակերտների սոցիալական առարկատարածքային և ինֆորմացիոն շրջապատում: Այդպիսի փոխհարաբերությունների բնույթը որոշվում է առաջին հերթին դասի տեսակով : Ավանդական դասի ժամանակ, որտեղ աշակերտներին փոխանցվում է անհրաժեշտ ինֆորմացիա և ստուգվում նրա ընկալությունը , ուսուցիչը գործ ունի ամբողջ դասարանի հետ, որը կատարում է նույն հանձնարարությունը : Դրա համար էլ ավանդական կաբինետներում ուսուցչի և աշակերտների տեղերը կահավորված են ստացիոնալ: Դասի ժամանակ հիմնականում աշխատում է առաջնապատը, որտեղ գտնվում են գրատախտակը, բարտեզները և այլն: Ժամանակակից դասը տարբերվում է նպատակների զանազանությամբ, որտեղ ուսուցիչը ոչ միայն ինֆորմացիա է հաղորդում, այլև զարգացնում է հիշողությունը, երևակայությունը, դաստիարակում է աշակերտների մտ կյանքի հանդեպ ակտիվ մասնակցություն : Ժամանակակից դասերը զանազան են իրենց ձևով. նրանք համադրում են դպրոցների անհատական, խմբային, կոլեկտիվ աշխատանքները.

դաս — լեկցիաներ, դաս — սեմինարներ , դաս — խաղեր , դաս — ֆենարկումներ, պահանջում են կաբինետի վերածեղանություն [16] :

Նկարչության դերը աշխարհագրական պատկերացումների ու հասկացությունների ձևավորման գործում: Ի տարբերություն մյուս առարկաների՝ աշխարհագրությունը գործ ունի օբյեկտների հետ, որոնց չափերը շատ մեծ են : Բավական է նշել լեռնաշղթաները, ընդարձակ հարթավայրերը, գետերը, լճերը, ծովերը և այլն : Միայն այդ հանգամանքն է ստիպում ուսուցչին գործի դնել գրատախտակը և կավիճը , որպեսզի նկարեն այդ իրերի պատկերները շատ փոքրացված վիճակում: Բացի դրանից աշխատանքային օբյեկտները հաճախ շատ բարդ են և զանազան, որոնք առանց գծագրի կամ նկարի ոչ միշտ է հնարավոր հասկանալ : Գծագիրը գրատախտակին տրվում է հեշտացված ձևով, որը լրացվում է

ուսուցչի տեխնոլոգիա : Օրինակ՝ ուսուցիչը ցանկանում է ծանոթացնել ցածրնթաց և վերընթաց աղբյուրներին : Բառերով դժվար է, երբ գծագիրը գրատախտակին հայտնվում է, ամեն ինչ հեշտանում է :

Ենթադրենք դասավանդում ենք տարրական դպրոցում և ուզում ենք բացատրել երեխաներին ստորերկրյա ջրերի ստեղծման և շարժման մասին : Ենթադրենք երեխաները դեռ չեն տեսել սխեմատիկ նկարը, որտեղ ցուցադրված է այդ ամենը, և ընդհանրապես այդ թեման չեն անցել : Մենք դիմում ենք երեխաներին, խնդրում հիշել գեոստրախտակների մասին, որտեղ նրանք սառը ջուր են խմել : Նրանք հաճույքով հիշում են : Գեոստրախտակներից անցում ենք կատարում ջրհորների, որոնց մասին ևս երեխաները գիտեն : Հետո խոսքը ուղղում ենք ստորերկրյա ջրերին : Պատմում ենք անձրևաջրերի մասին, որոնք անցնում են հողի մեջ, հետո հողային շերտերով : Երեխաները չհասկանալով տխրում են : Մենք այժմ դիմում ենք գրքի նկարին, բայց նորից դուրս փորձի շերտիկով դասը ուրիշ կերպ ենք կազմակերպում : Հարց ու պատասխանների միջոցով մենք համոզվում ենք, որ մեր նկարած սխեման հասկանալի է դարձել երեխաների համար, և այսպիսով՝ թեման բացատրելուց, վերջացնելուց հետո երեխաները նկարում են գծագիրը իրենց տետրերում : Երկարամյա ուսումնասիրությունները և փորձը իրավունք են վերապահում ասել, որ երեխաները մեծ հաճույքով են վերանկարում գրատախտակից իրենց տետրերում : Սա անհիմաստ սպազորություն չէ, այլ իմաստավորված աշխատանք : Նրանք կնկարեն նույն հերթականությամբ, ինչպես պատմել ենք, և կհիշեն մեր պատմածը : Քայլ առ քայլ նրանք կկատարեն այն ամենը ինչ մենք ենք կատարել գրատախտակին : Կարելի է նշել, որ բոլոր երեխաներն են աշխատել : Քայլերով շարժերի միջով և ուժադիր նայելով նրանց աշխատանքներին՝ նկատում ենք, որ ոչ միշտ է լինում, որ բոլոր աշակերտներն են յուրացնում ամբողջը : Ու դա արտահայտվում է նկարի վրա : Ուժադիր ուսուցիչը կնկատի սխալը, կնստի աշակերտի մոտ, կգրուցի և ժամանակին կուղղի սխալը [16] :

Մանկավարժներից ոչ ոք չի վիճի՝ ասելով, որ սխալը նախագրուցացնելը տասն անգամ գնահատելի է, քան հետո ուղղելը : Բացի սխալներից մենք տեսնում ենք նաև աշակերտի աշխատանքի բնույթը : Ահա մեկը հստակ և վստահ գծում է գծերը շատ հիշտ, մյուսը՝ ընդհակառակը՝ դժվարությամբ, բայց վերջիվերջո հասնում է լավ արդյունքի, երրորդը աշխատում է անփութ, կեղտոտ. գծապատկերում նրա գծերը չեն միանում, նա կեղտոտում է էջը : Մեր առջև բացահայտվում են աշակերտների բնավորությունները : Նրանց նկարները թույլ են տալիս մեզ ավելի խորը ուսումնասիրել մեր աշակերտներին : Տվյալ օրինակից ավելի պարզ է դառնում նկարչության նշանակությունը՝ որպես դասավանդման ձև : Այստեղից մենք կարող ենք ոչ միայն եզրակացնել նկարչության օգտավետության մասին՝ որպես դասավանդման ձև, այլև հետել այն : Մենք կարող ենք ասել, որ նկարչությունը օգնում է երեխաներին հասկանալ և ընկալել դժվար թեման : Կարելի է ասել, որ երեխաները աշխատում են մեծ հաճույքով : Այս օրինակը վերաբերում է տարրական դպրոցին : Բոլոր բերված օրինակներում երևում է, որ նկարչությունը ոչ միայն օգնում է գործին, այլև անհրաժեշտ է [16] :

Գլուխ 2. Փորձարարական մաս


3.1. Աժխարհագրության ժամանակակից դասի մոդել

«Ջրի շրջապտույտը և նրա նշանակությունը բնության մեջ» թեմայով

Թեմա՝ Ջրուրրտ

Դաս 5.2. «Ջրի շրջապտույտը և նրա նշանակությունը բնության մեջ»

Նկար 1



Ուսուցողական նպատակ՝ ձևավորել գիտելիքներ ջուր, ջրի շրջապտույտ հասկացությունների վերաբերյալ, ծանոթացնել շրջապտույտի երկու տեսակներին՝ մեծ կամ համաժխարհային փոքր կամ տեղական, ջրի շրջապտույտի նշանակությունը բնության մեջ :

Զարգացնող նպատակ՝ ձևավորել աշակերտների մոտ իմացական ունակություններ և հետաքրքրասիրություն՝ կապված ջրի շրջապտույտի հետ, զարգացնել ստեղծագործական մտածողությունը՝ տեսնելով, թե ինչպիսի երևույթ է ջրի շրջապտույտը , արդյո՞ք այն դրական գործընթաց է բնության մեջ, թե ոչ : Ի վերջո ինչպես է իրականացվում ջրի շրջապտույտը և ինչ պիտե՞մայով կապակերեն դա :

Դաստիարակչական նպատակ՝

Ձևավորել հայրենասիրություն, էկոլոգիական մշակույթ, բարոյական հատկանիշներ և հուզարժեքային վերաբերմունք հետևյալ արտահայտությունների միջոցով՝

1.«Ջուր դու ոչ միայն անհրաժեշտ ես կյանքի համար , դու ինքդ կյանքն ես, աժխարհի մեծագույն հարստությունը» :

2.«Կյանքում ամենաանհրաժեշտ բանը ջուրն է, բայց այն հեշտ է փչացնել» :

Դասի գիտամեթոդական բովանդակությունը ջրի շրջապտույտ , ջրի մեծ կամ փոքր շրջապտույտ , գոլորշացում , տեղումներ հասկացություններն են:

Դասի անվանակարգը՝ Համաժխարհային օվկիանոս (գետեր , լճեր , հահիճներ , ստորերկրյա ջրեր և այլն) ,
ցամաք , ջրալարա , Երկրի մակերևույթ:

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդում:

Մերոդական համակարգ՝ ֆրոնտալ հարցում, համը նկարի ցուցադրում և լրացում, թեստ, մտազրույց ,
ընդհանրացնող գրույց:

Կահավորում՝

1.դասագիրք , տետրեր , գրիչներ,

2.գրատախտակ և գունավոր կավիճներ,

3. Երկրի մակերևույթի մանրակերտ (ջուր, ծառի նյութեր, հող , ավազ, ծաղիկներ, թղթից պատրաստված
տնակներ),

4.համը նկար,

5.ամպեր, արև՝ պատրաստված գունավոր թղթերից

6.պենսիլաստի հատիկներ՝ արհեստական տեղումներ առաջացնելու նպատակով:

Նկար 2



Դասի ընթացքը՝ Հաշվառում , «Տնային աշխատանքի» առկայության ստուգում

Առաջին փուլ – Խթանում, տևողությունը՝ 5-10ր :

Ներածություն՝ «մտազրույց» մերոդով բացահայտում ենք սովորողների տեղեկացվածության աստիճանը
առօրյա կյանքում ջրի կիրառման վերաբերյալ: Ամփոփելով առկայությունների կարծիքները՝ առաջադրել
պարզեմային հարց՝ «Ո՞րն է ջրի նշանակությունը մարդկության ու բնության կյանքում» :

Երկրորդ փուլ – Իմաստավորում, տևողությունը՝ 15-20ր.

I մաս – նպատակը՝ գիտելիքների ստուգում ֆրոնտալ հարցման միջոցով :

Հարց 1. Ի՞նչ է ջրալարսը, տալ նրա սահմանումը :

Հարց 2.Ձուրը ի՞նչ ագրեգատային վիճակներով է հանդես գալիս :

Հարց 3. Գրել ջրի ֆորմուլան և նշել, թե ինչ սարքերից է այն կազմված :

II մաս – նպատակը՝ նոր հյուրի մատուցում, կարողությունների տրամաբանական և աշխարհագրական մտածողության ձևավորում և զարգացում:

Ջուրը արևի հառազայթների ազդեցությամբ գոլորշանում և բարձրանում է վեր, որոշակի բարձրության վրա ստոչելով՝ տեղումների ձևով թափվում է ցած: Եթե այս գործընթացը տեղի է ունենում սահմանափակ տարածքի վրա, ապա կոչվում է տեղական կամ վտֆր Երջապտույտ: Իսկ եթե գոլորշացած ջրի մի մասը տեղումների ձևով թափվում է նույն տեղում, իսկ մյուս մասը ֆամիների և օդային զանգվածների միջոցով տեղափոխվում ցամաքի վրա, կոչվում է մեծ կամ համաշխարհային Երջապտույտ: Այս ամենը ցույց տրվեց Երկրի մակերևույթի մանրակերտի վրա, որը իրենից ներկայացնում էր տարալի լցված ջրի, ծառի հյուղերի, ծաղիկների, հողի, ավազի և այլ պարագաների հագեցվածություն, ամպիկների, արևի, ինչպես նաև պենոպլաստի հատիկների միջոցով, որոնք լցված էին քրթիկների մեջ և փակցված ամպիկներին: Բացատրությունից հետո աշակերտները համը նկարի վրա արված սլաֆներին փակցրեցին գոլորշացում և տեղումներ բառերը:

Երբորդ փուլ – Կռադասում, տևողությունը՝ 10-15ր

Նպատակը՝ ուսումնադաստիարակչական գիտելիքների ամփոփում հարցերի միջոցով, թեստերի և խաչբառի լրացում, տնային աշխատանքի հանձնարարում

Ամփոփում հարցերի միջոցով՝

Հարց 1 Ի՞նչ է Երջապտույտը:

Հարց 2 Ջրի Երջապտույտի ֆամի՞ տեսակ գիտեք;

Հարց 3 Ի՞նչ նշանակություն ունի ջրի Երջապտույտը:

Յուրացման որակի թեստ

Հարց 1. Ի՞նչ է ջրոլորտը: Տալ նրա սահմանումը: (1մ)

Հարց 2. Եթե չլինի Երկրի վրա այդ նյութը, Երկրի վրայից կյանքը կվերանա (1մ)

Հարց 3. Ընտրել սխալ տարբերակը (1մ)

Ջուրը հանդես չի գալիս _____ վիեակով

ա) պինդ բ) հեղուկ գ) գազային դ) լնացած

Հարց 4. Ընտրել ջրի Երջապտույտի նիշտ հերթականությունը (1մ)

ա) օվկիանոս – գոլորշի – ամպ – տեղումներ

բ) գոլորշի – տեղումներ – օվկիանոս – ամպ


գ) տեղումներ – ամպ – գոլորշի – օվկիանոս

Հարց 5. Բացատրե՛ք ձեր բառերով (2մ)

Կյանքում ամենաանհրաժեշտ բանը ջուրն է, բայց այն հեշտ է փչացնել

Հարց 6. Ի՞նչ ատոմներից է կազմված ջրի մոլեկուլը (H₂O) (1մ)

Հարց 7. Սլաֆների վրա նշել, թե ի՞նչ է տեղի ունենում (1մ)



Նկ 5.2. Զրի մեծ ջրապահույցի սխեմայի պարզերը:

Հարց 8. Տրված բառերը տեղադրել նկարի համապատասխան տեղերում (2մ)

ա) լանջ բ) ստորոտ գ) գագաթ



Նկ 4.15. Լեռան հիմնական մասերը:

Խաչբառի հարցեր

Հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում սովորողները կկարգան գաղտնաբառ, որն արտահայտություն է ջրի մասին, և այն աշակերտների մոտ կձևավորի հուզարթեֆային վերաբերմունք, էկոլոգիական հաշակ և աշխարհագրական մտածողություն:

Հարց 1. Ի՞նչպես է կոչվում Երկիր մոլորակի ջրային թաղանթը:

Հարց 2. Ո՞րն է Երկրի արբանյակը:

Հարց 3. Շիկացած գագաթին գունդ, որը մարդուն լույս և ջերմություն է տալիս:

Հարց 4. Երկարավիզ կենդանի:

Հարց 5. Մոլորակ, ուր մենք ապրում ենք:

Հարց 6. Նյութը հանդես է գալիս, պինդ, հեղուկ և վիճակներով:

Հարց 7. Ջրերը լինում են՝ ֆոսֆորահամ և:

Հարց 8. Ջրի մոլեկուլը կազմված է՝ թթվածնի և ատոմներից:

Հարց 9. Հստ կառուցվածքի լեռները լինում են՝ ծալաբեկորավոր, հրաբխային և:

Հարց 10. Լեռ Կովկասյան լեռներում, որը հայտնի հանգած հրաբուխ է՝

	Լ	Բ		ՈՒ	Ս
--	---	---	--	----	---

Լրացնելուց հետո ստացվեց «Ջուրը կյանք է» արտահայտությունը:

Տնային աշխատանք՝ սովորել 5.2. դասը և կատարել դասի վերջին հարցերը գրավոր:

Դասի արդյունքում ձևավորվեցին հետևյալ էմպիրիկ գիտելիքները՝

Պատկերացումները, որոնք լիարժեք ձևավորվեցին ուսուցման միջոցների շարժական և անշարժ մոդելների օգնությամբ :

Հասկացությունները՝ ջուր, ջրի շրջապտույտ և նրա նշանակությունը բնության մեջ, գոլորշացում և սեղումներ ամպիկների և արևի առկայությամբ :

Փաստեր, այն որ ջուրը բարձրանալով մթնոլորտի վերին շերտերը այնտեղ ջերմաստիճանը ցածր է 0° -ից , ինչպես նաև այն , որ ջրի մոլեկուլը (H_2O) կազմված է 2 ատոմ ջրածնից և մեկ ատոմ օքսիգենից :


Անվանակարգ՝ Համաեթարհային օվկիանոս (Խաղաղ, Ատլանտյան, Հյուսիսային Սառուցյալ , Հնդկական), ինչպես նաև գետերի և լճերի անվանումներ:

Օրինաչափությունները և պատճառահետևանքային կապերը հատկապես հետևյալ հարցադրումները կատարելուց հետո


Ո՞րն է սեղումների առաջացման պատճառը : Ի՞նչ հետևանքներ ունեն սեղումները :

Պատճառահետևանքային կապերի արդյունավետ յուրացման համար կիրառվում են տարբեր սխեմաներ :

Որպեսզի աշակերտները լավ յուրացնեն դասը , խոսքը պետք է ուղեկցվի գրատախտակին սխեմաներ պատկերելով , օրինակ հետևյալ հենարանային տրամաբանական սեղմագրերը (ՀՏՍ)



կամ




Ստեղծագործական գործունեության փորձը զարգացվեց մտփի ֆարսեզագրում մերողով , որտեղ «ջուր» հասկացության վերաբերյալ յուրաքանչյուր աշակերտ մի գոյական կամ ածական էր թվում :

Հուզարժեքային վերաբերմունք ստեղծվեց գրատախտակին գրված արտահայտությունների միջոցով՝

«Ջուր ... դու ոչ միայն անհրաժեշտ ես կյանքի համար , դու ինքդ՝ կյանքս ես , աշխարհի մեծագույն հարստությունը» :

«Կյանքում ամենամեծ հրաժեշտ բանը ջուրն է , բայց այն հեշտ է փշացնել» :



Այս ամենի ամփոփումը եղավ այն , որ ուսուցման միջոցների շարժական և անճարժ մոդելների և խոսքի գուգորդումը ծնեց «աշխարհագրական պար» հնարը որը խոր հիմք հանդիսացավ աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում :

Առակերտներից որոշները երգեցին , որոշները պարեցին «Նս մեկու գավակ են» երգը , որի շնորհիվ ոտների շարժումները տեղումների թափվելն էր արտացոլում, շուրջպար բռնելը, ջրի շրջապտույտը , իսկ ձեռքերի վեր բարձրանալն ու թափահարելը ջրի գուրբացման գործընթացը : Այս ամենի հետևանքով ձևավորվեց ոչ միայն էսթետիկ հասակ և հայրենասիրական մղում , այլև ստեղծվեց միջառարկայական կապ աշխարհագրության և արվեստի միջև և մեկ անգամ փաստվեց , որ աշխարհագրությունը արվեստ է :

	1-ին փորձարարական դասարան				2-րդ փորձարարական դասարան				3-րդ ստուգողական դասարան			
	լիարժեք		Ոչ լիարժեք		լիարժեք		ոչ լիարժեք		լիարժեք		ոչ լիարժեք	
1. Պատկերացումներ	19	70%	8	30%	13	76%	4	24%	6	24%	9	76%
2. Հասկացություններ	20	74%	7	26%	12	71%	5	29%	5	20%	20	80%
3. Փաստեր	17	63%	10	37%	13	76%	4	24%	3	12%	22	88%
4. Անվանակարգ	15	55%	12	45%	12	71%	5	29%	4	16%	21	84%
5. Օրինաչափություններ և պատճառահետևանքային կապ	21	78%	6	22%	9	53%	8	47%	5	20%	20	80%
6. Ստեղծագործական գործունեության փորձ	23	85%	4	15%	12	71%	5	29%	7	28%	18	72%
7. Հուզարժեքային վերաբերմունք	21	78%	6	22%	14	81%	3	19%	6	24%	9	76%

Փորձարարական և ստուգողական դասարաններում կրթության բովանդակության բաղադրիչների տոկոսային տարբերությունները

Ամփոփում

Ուսումնասիրելով աշխարհագրության ուսուցման միջոցների ողջ համակարգը, աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների էությունը պարզ դարձավ, որ պատկերացումները

գիտելիքների ստորակարգման մեջ սահմանային դիրք են գրավում էմպիրիկ և տեսական գիտելիքների միջև : Մի կողմից պատկերացումը , դիտողական պատկեր է , որը ձևավորվում է շոշափելու , հոտառության , դիտողականության , լսողության միջոցով , մյուս կողմից այն բնութագրվում է օբյեկտը բնորոշող էական հատկանիշներով :

Աշխարհագրական պատկերացումները արտացոլում են առարկայի տեղը , դիրքը, արտաֆին տեսքը , մեծությունը այլ օբյեկտների և տարածքների նկատմամբ :

Աշխարհագրական հասկացությունները օբյեկտի կամ երևույթի ներքին էական հատկանիշների արտացոլումն են գիտակցության մեջ : Նրանք բնութագրվում են իրենց ծավալով և բովանդակությամբ : Օրինակ «Համաշխարհային օվկիանոս» հասկացության ծավալը մեծ է , իսկ «Սևանա լիճ» հասկացության ծավալը՝ փոքր , քանի որ այն եզակի հասկացություն է, իսկ «Համաշխարհային օվկիանոս» հասկացության ծավալը մեծ է , քանի որ նրա մեջ մտնում են գետերի , լճերի , նեղուցների , ծովերի , ծոցերի , ստորերկրյա ջրերի մեծ քանակներ :

Ինչ վերաբերվում է ուսուցման միջոցներին , կարող ենք ասել , որ դրանք բազմաթիվ են և բազմանպատակ և կազմում են մի ամբողջություն : Նրանց ավանդական և ժամանակակից տեսակները ըստ էության ասես մեկը մյուսին լրացնեն : Օրինակ դասագիրքը լրացնում է էլեկտրոնային դասագրքին , կինոֆիլմերը՝ սահիկահանդեսներին , գրատախտակը՝ էլեկտրոնային գրատախտակին :

Ու այս ամենի միախառնումից առաջանում է ուսուցման միջոցների նոր որակ : Եվ դրանց կիրառումը թե՛ առանձին , և թե՛ միաժամանակ , միայն կբարձրացնի ուսուցման որակը և դասը կծառայեցնի իր նպատակին :

Եզրակացություններ

1. Կիրառելով ուսուցման միջոցների համակարգը փորձարարական դասարաններում և համեմատելով դրանք ստուգողական դասարանում ստացված արդյունքների հետ հիմնավորվեց աշխարհագրության ուսուցման միջոցների կիրառման արդյունավետությունը ուսուցման գործընթացի կազմակերպման ինչպես նաև պատկերացումների և հասկացությունների ձևավորման վրա

2. Մշակելով ժամանակակից դասի պահանջներին համապատասխան դասի մոդել լիովին արտացոլվեց ուսուցման միջոցների դերը աշխարհագրական պատկերացումների և հասկացությունների ձևավորման գործում :

Ուսուցման միջոցների անշարժ և շարժական մոդելների կիրառումն ու զուգորդումը կենդանի խոսքի հետ փորձարարական դասարաններում, առավել լիարժեք ձևավորվեցին հասկացություններն ու պատկերացումները : Ստուգողական դասարանում , նույն նյութի ուսուցման և ստուգման արդյունքում ստացանք առավել թույլ արդյունքներ : Ուսուցման միջոցները այնպիսի հույզեր և զգացմունքներ արթնացրեցին , որ ջրի շրջապատույտի վերաբերյալ պատկերացումը ներկայացվեց «աշխարհագրական պար» հնարի միջոցով : Հնարի դիդակտիկական արժեքն այն էր , որ նյութի յուրացմանը մասնակից դարձան սովորողի հույզերը ինչն առավել արդյունավետ դարձրեց գիտելիքի յուրացումը : Այն լիովին նպաստեց հուզարժեքային վերաբերմունքի ձևավորմանը , գեղագիտական հասակի զարգացմանն ու բազմակողմանի զարգացած անձի ձևավորմանը : Ինչպես նաև ստեղծվեց միջառարկայական կապ , արվեստի և աշխարհագրության միջև :

Օգտագործված գրականության ցանկ

1. Մինասյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա , Երևան 2013, 343 էջ
2. Մինասյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները, «Ասողիկ» , 2011, 95 էջ
3. Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա , Երևան , «Զանգակ» հրատ. 2002
4. 13.Àíàíüââ Á.Ã., Îñÿçàíèà â ïðïðãññàð ïîçíàíèÿ è òðóàà, Ì., "Àèàä. ïää. íàóê ÐÑÕÑÐ", 1959, 263 ñ.
5. Àíàíüââ Á.Ã., Îñèðíèíàèÿ ÷óàñðàáííâí ïîçíàíèÿ Ì., "Àèàä. ïää. íàóê ÐÑÕÑÐ" 1960, 486 ñ.

6. Ààðàíñèèé Í.Í., Ìàòíàèèà ìðàííààààíèÿ ýéííìè÷ãñéíé àáíãðàðèè, Ì., Ó÷íàããèç, 1960,440 ñ.
7. Бибик А.А. Ìàðààèèèèé, Ìàòíàèèà íàó÷áíèÿ àáíãðàðèè â ñðàáíé øèèã, Ì., "Ìðííâàùáíèè", 1975, 384 ñ.
8. Голов В.П. Средства обучения географии и условия их эффективного использования: Учеб. пособие для студентов пед. ин-тов по спец. № 2107 "География". — М.: Просвещение, 1987. — 222 с
9. Даринский А. В. Методика преподавания географии. -М., 1975. 368 с
- 10.Догоюсова, Ж. В., Методика использования художественных средств обучения в целях совершенствования географической подготовки учащихся в процессе реализации регионально-национального компонента школьного географического образования : <http://www.dissercat.com/content/metodika-ispolzovaniya-khudozhestvenny-kh-sredstv-obucheniya-v-tselyakh-sovershenstvovaniya-g>
11. Äíðí Ä., ßñ Ä., Óíðíèèðíààíèÿ ìðàãíðààèèáíèè è ñíÿðèè ìðè íàó÷áíèè àáíãðàðèè, ìãð. ñ. íàì. , Ì., "Ìãããíãèèè", 1970,236 ñ.
- 12.Дущина И. В. Под ред ., Методика обучения географии в общеобразовательных учреждениях , М. Дрофа , 2007
13. Душина И. В., Таможняя Е. А. , Методика и технология обучения географии в школе , М. , Астрель , 2004 .
14. Èàááííàà-Ìàèèãð Ä.Í., Ìñèèðíèèèÿ òíðíèèðíààíèÿ çíáíèè è íàáÿèèà ó øèèèüíèèè, Ì., 1962, 375 ñ.
15. Калинин А. Н. , Самодельные пособия по географии , Москва , 1952 62 с.
16. Половинкин А.А., География и рисование , Москва , 1949 ,135 с
17. Студенцов Н.Н., Урок географии в средней школе , Москва , 1958 , 156 с.
18. Сухова Н. Г., Развитие представлений о природном территориальном комплексе в русской географии , Ленинград , 1981 , 212 с.
- 19.Украйченко А. Современные методы и средства обучения географии <http://www.proza.ru/2013/05/20/1616>
20. Финаров Д. П. Методика обучения географии в школе , М., Астрель , 2007
21. Õàèèðíèè Ä.Ä., Ðíèü íàãÿáííðèè â ðàçàèèèè ñçíàààðèèèé àãÿðèè-ííðèè, // Æèãðàðèèè à øèèèã, 1989, №2, 52-55 ñ.

